# «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

## 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2009

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2008-2010 թվականների համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ 2008 թվականի մայիսի 16-ի N265Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2009 թվականի մարտի 24-ի №04-ԵԳ-05/1601 գրությամբ ներկայացված հաշվետվությունը (2008 թվականի սեպտեմբերի 26-ի N04-ՎԱ-05/5488 գրությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դիմել էր հանձնաժողով 2008-2010 թվականի ներդրումային ծրագրի 2008 թվականի ներդրումների ծավալում փոփոխություններ կատարելու համար: Առաջարկվող փոփոխությունները նույնպես հաշվի են առնվել սույն վերլուծական տեղեկանքում:):

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի**
**2008 թվականի ներդրումային ծրագիրը**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2008 թվականի պարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2008-2010 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված  է տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված է ներդրումներ  իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, այլ անաձանց պատկանող ցանցերի ձեռքբերման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով, համակարգչային տեխնիկայի, տնտեսական գույքի, արտադրական և տնտեսական գործիքների ձեռքբերման ուղղություններով: Բացի վերը նշվածը ներդրումներ են նախատեսվում ճապոնական բանկի վարկային ծրագրի շրջանակներում 110կվ ենթակայանների արդիականացման համար նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2008-2010 թվականների ընթացքում իրականացնել 50 564.8[1] մլն դրամի ներդրումներ, որից 20 956.3 մլն դրամը՝ 2008

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

թվականի ընթացքում: 2008 թվականի սեպտեմբերի 26-ի N04-ՎԱ-05/5488 գրությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դիմել էր հանձնաժողով 2008-2010 թվականի ներդրումային ծրագրի 2008 թվականի ներդրումների ծավալում փոփոխություններ կատարելու համար: Առաջարկված փոփոխությունները, համաձայն հանձնաժողովի 06.11.2008թ. ՆՌՆ-2336Լ գրության՝ բացառությամբ 6-րդ՝ «Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ» հավելվածում (գրասենյակային գույքի, բջջային հեռախոսների և մեքենաների կապիտալ նորոգման ուղղություններով) 1-ին, 2.3-րդ և 7-րդ կետերով առաջարկվող փոփոխությունների, նույնպես հաշվի են առնվել սույն վերլուծական տեղեկանքում: Այսպիսով 2008 թվականի ընթացքում ընկերությունը նախատեսում էր իրականացնել 20 784.2 մլն դրամի ներդրումներ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2008 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև՝ ըստ դրանց նպատակային առանձնահատկությունների:

**ԳՐԱՖԻԿ 1**




Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 53 %-ը, նախատեսված է սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով

ուղղել մալուխային և օդային գծերի ու ենթակայանների վերակառուցմանը, վերազինմանը և նորերի կառուցմանը:

Հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումները իրենց փեսակարար կշռով երկրորդն են: Այդ նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր նաև տեղակայված հաշվիչների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև 0.4, 6(10) և 35 կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը 110 կՎ ենթակայանների արդիականացման ուղղությամբ ներդրումներն են: 2008 թվականին ընկերությունը նախատեսում էր իրականացնել ներդրումներ, որոնք թույլ կտան արդիականացնել 110 կՎ լարման 13 ենթակայանների սարքավորումները: Այս ծրագիրը իրակացվում է Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկային միջոցներով: Մոտ 10 մլրդ դրամ արժողությամբ ծրագրի 200 մլն դրամը պլանավորվում է իրականացնել 2008 թվականին՝ նախագծային աշխատանքների իրականացման համար: Միաժամանակ սույն ծրագրով նախատեսված ներդրումները արդյունավետ իրականցնելու նպատակով այդ ենթակայաններում անհրաժեշտ էր իրականացնել որոշ նախապատրաստական աշխատանքներ, ուստի 2008 թվականին ընկերությունը նախատեսում էր սկսել այդ աշխատանքների կատարումը:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1738.7 մլն դրամ՝ ընդհանուրի 8.4%-ը:

1210.3 մլն դրամ՝ ընդհանուրի 5.8%-ը նախատեսվում էր ներդնել բաշխիչ ցանցերի ընդլայնման և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 6.8%-ը, պետք է իրականացվեին վարչական շենքերի վերակառուցման, մեքենա-մեխանիզմների, գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, Microsoft windows օպերացիոն համակարգի լիցենզիաների ինչպես նաև շահագործման կազմակերպման համար այլ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ: Այս ուղղություններով 2008 թվականի ընթացքում նախատեսվում էր իրականացնել 1405.6 մլն դրամի ներդրումներ:

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի**
**2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները**

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2008 թվականի ընթացքում կատարել է 14394.3 մլն դրամի ներդրումներ[2], որի արդյունքում շահագործման են հանձնվել 13080.8 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 1313.5 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված ներդրումների ծավալների համեմատականը:

**ԱՂՅՈՒՍԱԿ 1**

| N | Ներդրումների նպատակային ուղղությունները | Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2008 թվականի կանխատեսվող ծավալը | | 2008 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը | | Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը |
|---|---|---|---|---|---|---|
| | | մլն դրամ | % | մլն դրամ | % | % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում | 11 064.5 | 53.2% | 7 504.2 | 52.1% | 67.8% |
| 2 | Բաշխիչ ցանցերի ընդլայնում | 1 210.3 | 5.8% | 1 321.2 | 9.2% | 109.2% |
| 3 | 110 կՎ ենթակայանների արդիականացում | 2 030.0 | 9.8% | 131.3 | 0.9% | 6.5% |
| 4 | Հաշվառման համակարգի բարելավում | 3 335.1 | 16.0% | 3 375.8 | 23.5% | 101.2% |
| 5 | Անվտանգության միջոցառումներ և մաշված սարքավորումների փոխարինում | 1 738.7 | 8.4% | 621.4 | 4.3% | 35.7% |
| 6 | Գրասենյակային գույքի ձեռքբերում | 100.0 | 0.5% | 92.8 | 0.6% | 92.8% |
| 7 | Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում | 73.1 | 0.4% | 0.0 | 0.0% | 0.0% |
| 8 | Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում | 700.0 | 3.4% | 395.0 | 2.7% | 56.4% |
| 9 | Շենքերի և շինությունների վերակառուցում | 459.7 | 2.2% | 504.9 | 3.5% | 109.8% |
| 10 | Այլ | 72.8 | 0.4% | 37.0 | 0.3% | 50.8% |

[2] 2008 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ծավալում ներառված են նաև նախորդ ժամանակաշրջանում իրականացված 754.2 մլն դրամի աշխատանքները, որոնք շահագործման են հանձնվել 2008 թվականին:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Ներդրումային ծրագրով չնախատեսված ներդրումներ | | | 410.7 | 2.9% | |
| | Ընդամենը | 20 784.2 | 100% | 14 394.3 | 100% | 69.3% |

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները.

**ԱՂՅՈՒՍԱԿ 2**

| | Ներդրումների ձևավորման աղբյուրները | Իրականացված ներդրումների ծավալները |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **1** | **Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից** | 754.2 |
| **2** | **Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից** | 8 495.6 |
| **3** | **Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից** | 2 704.3 |
| **4** | **Սեփական ուժերով կատարված աշխատանքներից** | 2 440.2 |
| 4.1 | *աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր* | *129.6* |
| 4.2 | *հումք և նյութեր* | *1 392.8* |
| 4.3 | *վերադակայման ենթակա սարքավորումներ* | *917.8* |
| 4.4 | *այլ* | *0.0* |
| **5** | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **14 394.3** |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2007 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 14394.3 մլն դրամ, որից 754.2 մլն դրամը նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներն են: Ներդրումների 59%-ը, իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 17%-ը: Համեմատության համար նշենք, որ 2007 թվականին իրականացված ներդրումների 43%-ն էր իրականացվել այլ կազմակերպությունների կողմից և 22%-ը ընկերության սեփական ուժերով:

Ստորև, առավել հանգամանալից ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2008 թվականին իրականացված ներդրումների ծավալները հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման

տեսանկյունից: Հարկ ենք համարում նշել, որ սույն վերլուծական տեղեկանքում սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ներկայացված ծավալը վերջնական չէ և հետագայում կարող է ճշգրտվել մոնիթորինգի իրականացման արդյունքներով:

Իրականացված ներդրումների ծավալում առկա են այնպիսի աշխատանքներ, որոնք չեն ընդունվել հանձնաժողովի աշխատակազմի կողմից՝ մասնավորապես.

1. արտաքին լուսավորության աշխատանքները՝ 130.55 մլն դրամ ընդհանուր ծավալով, քանի որ դրանք չեն բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից,
2. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ՕՊՆ, ԿՍՕ, ՅԱՌՎ) արժեքներից ռուսական շուկայում առկա առաջարկների հետ համադրության արդյունքում նվազեցվել է 835.22 մլն դրամ,
3. 587 անվանում մինչև 25000 դրամ արժեքով աշխատանքները ընդհանուր 5.57 մլն դրամ ծավալով, քանի որ անհասկանալի է այդ աշխատանքների որպես ներդրում դիտարկելու հանգամանքը,
4. 2008 թվականի ընթացքում ձեռք բերված 372.0 մլն դրամի հաշվիչների արկղերի արժեքից 194.7 մլն դրամը և նոր բաժանորդների միացման նախսերում արկղերի արժեքից 309.9 հազ. դրամը՝ հաշվի առնելով դրանց ձեռքբերման արժեքների ուսումնասիրության արդյունքները,
5. Բագրատունյաց 54 հասցեում ընկերությանը պատկանող շենքում տարբեր տիպի աշխատանքների արժեքը՝ ընդամենը 17.68 մլն դրամ, քանի որ այդ շենքը վարձակալությամբ տրված է այլ ընկերության:
6. ներդրումային ծրագրով չնախատեսված և չհիմնավորված ներդրումները՝ 134.87 մլն դրամ:
7. նախորդ տարվա հաշվետվություններում տեղ գտած սխալեր՝ 17.98 մլն դրամ:

Այսպիսով սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալի որոշման ժամանակ ներդրումների ընդհանուր ծավալից ենթակա է նվազեցման 1336.88 մլն դրամ:

## Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումները

Սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության 2008 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 11064.5 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման, վերակառուցման և նորերի

կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել է 7504.2 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 6960.2 մլն դրամի ներդրումները: Հարկ ենք համարում նշել, որ այս ուղղության երկու ենթաուղղություններով ներդրումների ծավալը գերազանցվել է 26.2 մլն դրամով, որից 25 մլն դրամը բավարար հիմնավոր չէ և ենթակա է նվազեցման ներդրումների ծավալից:

2008 թվականին առաջին անգամ սպասարկման որակի ցուցանիշները սահմանվել են յուրաքանչյուր մարզի համար: Ներդրումային ծրագրով նախապեսվում էր առաջնահերթ ներդրումներ իրականացնել առավել վատ ցուցանիշներով մարզերում: Օրինակ եթե Երևան քաղաքի համար 6.47 հոսանքազրկում/սպառող 2007 թվականի ցուցանիշը նախապեսվում էր նվազեցնել 3.1%-ով՝ մինչև 6.27 հոսանքազրկում/սպառող, ապա Արագածոտնի մարզում 12.35 հոսանքազրկում/սպառող ցուցանիշը նախապեսվում էր նվազեցնել մինչև 36.5%-ով՝ 7.84 հոսանքազրկում/սպառող:

Ստորև ներկայացվում է 2008 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և փևողության ցուցանիշների համեմատությունը 2007 թվականի փաստացի և 2008 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

**ԱՂՅՈՒՍԱԿ 3**

| Հոսանքազրկումների միջին հաճախություն | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սպասարկման տարածքը | Չափի միավոր | 2007թ. փաստացի | 2008թ. ծրագրային | 2008թ.փաստ. 2008թ.ծրագր. նկատմամբ | 2008թ. փաստացի | 2008թ.փաստ. 2007թ.փաստ. նկատմամբ | Իրականացված ներդրումների ծավալը |
| Երևան | հոսանքա-զրրկում/ սպառող | 6.47 | 6.27 | 3.2% | 6.01 | 7.2% | 3 488.2 |
| Արարատ | հոսանքա-զրրկում/ սպառող | 4.33 | 4.31 | 0.4% | 4.17 | 3.7% | 346.7 |
| Վայոց ձոր | հոսանքա-զրրկում/ սպառող | 4.93 | 4.86 | 1.4% | 4.99 | -1.3% | 10.3 |
| Արագածոտն | հոսանքա-զրրկում/ սպառող | 12.32 | 7.84 | 36.4% | 6.18 | 49.9% | 169.8 |
| Արմավիր | հոսանքա-զրրկում/ սպառող | 11.66 | 7.88 | 32.4% | 7.41 | 36.5% | 427.1 |
| Կոտայք | հոսանքա-զրրկում/ սպառող | 1.49 | 1.44 | 3.5% | 3.84 | -157.4% | 188.1 |
| Գեղարքունիք | հոսանքա-զրրկում/ սպառող | 2.78 | 2.70 | 2.9% | 5.19 | -86.7% | 254.6 |
| Տավուշ | հոսանքա-զրրկում/ սպառող | 9.22 | 7.80 | 15.4% | 9.74 | -5.7% | 193.6 |
| Շիրակ | հոսանքա-զրրկում/ սպառող | 4.84 | 4.82 | 0.4% | 5.88 | -21.5% | 526.2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սյունիք | հոսանքա-զըրկում/ սպառող | 1.95 | 1.95 | 0.2% | 1.91 | 2.3% | 363.0 |
| Լոռի | հոսանքա-զըրկում/ սպառող | 5.09 | 5.02 | 1.3% | 4.82 | 5.2% | 398.3 |
| **Հոսանքազրկումների միջին փևողություն** | | | | | | | |
| Երևան | րոպե/ սպառող | 673.9 | 666.5 | 1.1% | 549.1 | 18.5% | 3 488.2 |
| Արարատ | րոպե/ սպառող | 786.6 | 770.8 | 2.0% | 725.1 | 7.8% | 346.7 |
| Վայոց ձոր | րոպե/ սպառող | 845.0 | 839.1 | 0.7% | 868.7 | -2.8% | 10.3 |
| Արագածոտն | րոպե/ սպառող | 2 223.1 | 1 854.0 | 16.6% | 1 337.7 | 39.8% | 169.8 |
| Արմավիր | րոպե/ սպառող | 2 892.3 | 2 039.0 | 29.5% | 1 556.7 | 46.2% | 427.1 |
| Կոտայք | րոպե/ սպառող | 391.7 | 390.1 | 0.4% | 488.7 | -24.8% | 188.1 |
| Գեղարքունիք | րոպե/ սպառող | 608.8 | 606.4 | 0.4% | 798.1 | -31.1% | 254.6 |
| Տավուշ | րոպե/ սպառող | 1 678.6 | 1 584.6 | 5.6% | 1 345.8 | 19.8% | 193.6 |
| Շիրակ | րոպե/ սպառող | 1 110.5 | 1 005.0 | 9.5% | 771.4 | 30.5% | 526.2 |
| Սյունիք | րոպե/ սպառող | 578.2 | 570.7 | 1.3% | 540.5 | 6.5% | 363.0 |
| Լոռի | րոպե/ սպառող | 906.6 | 882.1 | 2.7% | 1 000.1 | -10.3% | 398.3 |

Ստորև ներկայացվում է 2008 թվականի ընթացքում սպառողների լարման շեղման միջին հաճախության և փևողության ցուցանիշների համեմատությունը 2007 թվականի փաստացի և 2008 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

**ԱՂՅՈՒՍԱԿ 4**

| **Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սպասարկման տարածքը | Չափի միավոր | 2007թ. փաստացի | 2008թ. ծրագրային | 2008թ.փաստ. 2008թ.ծրագր. նկատմամբ | 2008թ. փաստացի | 2008թ.փաստ. 2007թ.փաստ. նկատմամբ | Իրականացված ներդրումների ծավալը |
| Երևան | շեղում/ սպառող | 10.29 | 10.02 | 2.6% | 8.37 | 18.7% | 83.6 |
| Արարատ | շեղում/ սպառող | 24.84 | 23.18 | 6.7% | 27.69 | -11.5% | 132.4 |
| Վայոց ձոր | շեղում/ սպառող | 13.15 | 12.44 | 5.4% | 8.39 | 36.2% | 0.3 |
| Արագածոտն | շեղում/ սպառող | 23.58 | 20.61 | 12.6% | 22.28 | 5.5% | 14.1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արմավիր | շեղում/ սպառող | 11.03 | 10.46 | 5.2% | 15.76 | -42.9% | 41.8 |
| Կոտայք | շեղում/ սպառող | 10.56 | 10.21 | 3.3% | 11.23 | -6.3% | 108.9 |
| Գեղարքունիք | շեղում/ սպառող | 16.90 | 15.89 | 6.0% | 17.06 | -0.9% | 9.8 |
| Տավուշ | շեղում/ սպառող | 19.65 | 17.67 | 10.1% | 23.80 | -21.1% | 34.6 |
| Շիրակ | շեղում/ սպառող | 19.30 | 18.76 | 2.8% | 16.84 | 12.7% | 92.1 |
| Սյունիք | շեղում/ սպառող | 8.06 | 7.88 | 2.3% | 8.25 | -2.3% | 34.0 |
| Լոռի | շեղում/ սպառող | 22.61 | 18.90 | 16.4% | 23.18 | -2.5% | 42.7 |
| **Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին փևողություն** | | | | | | | |
| Երևան | ժամ/ սպառող | 1 781.5 | 1 719.1 | 3.5% | 1 474.3 | 17.2% | 83.6 |
| Արարատ | ժամ/ սպառող | 4 412.7 | 4 170.0 | 5.5% | 4 927.9 | -11.7% | 132.4 |
| Վայոց ձոր | ժամ/ սպառող | 2 386.8 | 2 250.8 | 5.7% | 1 525.7 | 36.1% | 0.3 |
| Արագածոտն | ժամ/ սպառող | 4 215.9 | 3 680.5 | 12.7% | 3 964.2 | 6.0% | 14.1 |
| Արմավիր | ժամ/ սպառող | 1 999.3 | 1 867.3 | 6.6% | 2 801.1 | -40.1% | 41.8 |
| Կոտայք | ժամ/ սպառող | 1 800.4 | 1 750.0 | 2.8% | 1 929.8 | -7.2% | 108.9 |
| Գեղարքունիք | ժամ/ սպառող | 3 089.2 | 2 937.8 | 4.9% | 3 139.0 | -1.6% | 9.8 |
| Տավուշ | ժամ/ սպառող | 3 392.9 | 3 053.6 | 10.0% | 4 174.7 | -23.0% | 34.6 |
| Շիրակ | ժամ/ սպառող | 3 465.5 | 3 358.0 | 3.1% | 3 034.3 | 12.4% | 92.1 |
| Սյունիք | ժամ/ սպառող | 1 449.8 | 1 419.4 | 2.1% | 1 483.0 | -2.3% | 34.0 |
| Լոռի | ժամ/ սպառող | 4 050.3 | 3 292.9 | 18.7% | 4 149.8 | -2.5% | 42.7 |

Ինչպես երևում է աղյուսակներից ներդրումների համեմատաբար հավասարաչափ բաշխման դեպքում սպացվել են բավական հիրարամերժ արդյունքներ: Այսպես, մոտ 170 մլն դրամ ներդրումների արդյունքում Արագածոտնի մարզում բաժանորդների հոսանքազրկումների հաճախության ցուցանիշը բարելավվել է գրեթե 2 անգամ, իսկ Կոտայքի մարզում 188 մլն դրամ ներդրումների պարագայում բաժանորդների հոսանքազրկումների հաճախության ցուցանիշը բարելավվելու փոխարեն վատթարացել է 2 անգամ: Տավուշի մարզում իրականացվել

է 193.6 մլն դրամի ներդրումներ, սակայն հոսանքազրկումների հաճախության ցուցանիշը նույնպես վատթարացել է:

Ներկայացված տեղեկատվության լիարժեք հավաստի լինելու հանգամանքի վերաբերյալ կասկածի տեղիք է տալիս նաև ստորև ներկայացված ՀՀ մարզերում 2008 թվականի ընթացքում հոսանքազրկումներ չունեցած բնակավայրերի թիվը:

**ԱՂՅՈՒՍԱԿ 5**

| | | Բնակավայրերի քանակ | Բնակավայրերի քանակ առանց ընդհատումների | % |
|---|---|---|---|---|
| 1 | Արագածոտնի մարզ | 119 | 51 | 43% |
| 2 | Արարատի մարզ | 98 | 42 | 43% |
| 3 | Արմավիրի մարզ | 98 | 31 | 32% |
| 4 | Գեղարքունիքի մարզ | 97 | 52 | 54% |
| 5 | Լոռու մարզ | 124 | 69 | 56% |
| 6 | Կոտայքի մարզ | 69 | 32 | 46% |
| 7 | Շիրակի մարզ | 131 | 33 | 25% |
| 8 | Սյունիքի մարզ | 134 | 112 | 84% |
| 9 | Վայոց ձորի մարզ | 54 | 21 | 39% |
| 10 | Տավուշի մարզ | 65 | 9 | 14% |
| 11 | Ընդամենը | 989 | 452 | 46% |

Ինչպես երևում է աղյուսակից ՀՀ մարզերի 989 բնակավայրերից 452-ում 2008 թվականի ընթացքում ընդհանրապես հոսանքազրկում չի գրանցվել: Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ բոլոր հոսանքազրկումներն են գրանցվում հաշվետվություններում:

Ամփոփելով այս ուղղությունը նշենք, որ սպասարկման որակի վերաբերյալ ստացվող տեղեկատվության հավաստիությունը ճշգրիտ գնահատելու համար անհրաժեշտ է տեղում ուսումնասիրել հոսանքազրկումների քանակի և տևողության գրանցման ընթացակարգերը:

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 3335.1 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար անպիտան հաշվիչները, կապարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը՝ դրանց շահագործման և պահպանման անվտանգությունը ապահովելու նպատակով: Նախատեսվում էր նաև իրականացնել հաշվիչների կապիտալ նորոգման աշխատանքներ 500 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 3375.8 մլն դրամի ներդրումներ (68.3 մլն դրամի աշխատանքները նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներն են), այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 2148.6 մլն դրամ, որից 1899.2 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղադրման նպատակով: Հարկ ենք համարում նշել, որ այս ներդրումները «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով հիմնականում իրականացվում են սպառողների միջոցների հաշվին, իսկ ընկերությունը դրանք փոխհատուցում է հաշվիչը սպառողի մոտ տեղակայելուց մեկ տարի հետո՝ էլեկտրական էներգիայի ծախսի հաշվին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչների տեղակայումը իրականացվում է բաժանորդների նախաձեռնությամբ և ընկերությունը այս ուղղությամբ ճշգրիտ կանխատեսումներ կատարել չէր կարող, առաջարկում ենք այս ենթաուղղությամբ ներդրումների գերազանցող մասը չնվազեցնել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
- սպառողների մոտ տեղակայված հաշվիչների կապիտալ նորոգման նպատակով՝ 488.8 մլն դրամ:
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 372.0 մլն դրամ,
- 0.4, 6(10) և 35 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 366.4 մլն դրամ, որից ավարտվել են 343.1 մլն դրամի աշխատանքները:

Ամփոփելով հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների ծավալի ներկայացումը, նշենք, որ չնայած այն հանգամանքին, որ փաստացի կատարված ներդրումների ծավալը կազմել է ծրագրայինի 101.2%-ը, գրեթե բոլոր ուղղություններով իրականացված ներդրումները չեն հասել նախատեսված ծավալներին, և կատարման նման ցուցանիշը արդյունք է միաֆազ բազմասակագնային հաշվիչների ուղղությամբ ներդրումների գրեթե 150% կատարման:

## Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ կատարված ներդրումները

Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ ներդրումային ծրագրով նախատեսվում էր 1210.3 մլն դրամի ներդրումներ իրականացնել Երևան քաղաքում աճող սպառման ծավալները բավարարելու համար Գրիգոր Լուսավորիչ 5 հասցեում ենթակայանի կառուցման, Դուրյան թաղամասի հարակից տարածքի էլեկտրամատակարարման և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ: 2008 թվականի ընթացքում փաստացի ներդրվել է 1017.3 մլն դրամ, որից 112.45 մլն դրամը նոր բաժանորդների ցանցին միացման ուղղությամբ ներդրումներն են: Հարկ ենք համարում նշել, որ նոր բաժանորդների միացման նպատակով գանձված միացման վճարները 257.1 մլն դրամ ընդհանուր ծավալով ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

## Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1738.7 մլն դրամ՝ ընդհանուրի 8.4%-ը: Փաստացի ներդրվել է 621.4 մլն դրամ, որի արդյունքում 578.8 (6.2 մլն դրամի աշխատանքները նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներն են) մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման: Արդյունքում լարման տարբեր մակարդակներում փոխարինվել են ուժային տրանսֆորմատորներ և այլ շահագործման համար ոչ պիտանի սարքավորումներ, վերակառուցվել են օդային գծեր:

Ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով նախապեսվում էր.

- վարչական շենքների վերակառուցման նպատակով ներդնել 459.7 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 504.9 մլն դրամ և շահագործման են հանձնվել 427.1 մլն դրամի աշխատանքներ (նշված ծավալում 77.6 մլն դրամի աշխատանքները իրականացվել են նախորդ ժամանակաշրջանում), ևս 77.8 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ,
- համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում՝ 475 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 194.0 մլն դրամի համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ: Այս ուղղությամբ ներդրումները կապարվել են 41.0%-ով,
- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերման նպատակով փաստացի իրականացված ներդրումները կազմում են 92.8 մլն դրամ կամ նախապեսվածի 92.8%-ը,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ նախապեսված էր ներդնել 73.1 մլն դրամ: Այս ուղղությամբ 2008 թվականի ընթացքում ներդրումներ չեն իրականացվել,
- ներդրումային ծրագրով 2008 թվականին նախապեսվում էր 225 մլն դրամի Microsoft windows օպերացիոն համակարգի լիցենզիաների ձեռքբերում: Այս ուղղությամբ փաստացի ներդրվել է 201 մլն դրամ,
- այլ սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ ներդրվել է 37 մլն դրամ՝ նախապեսվածի 51%-ը:

## Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ինչպես արդեն նշվեց 2008 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացվել է 14394.3 մլն դրամի ներդրումներ: Ավարտվել են 13080.8 մլն դրամ ընդհանուր արժեքով աշխատանքներ, այդ թվում 754.2 մլն դրամի նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներ: 1313.5 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ: Այս աշխատանքները ենթակա են նավազեցման ներդրումների ընդհանուր ծավալից, քանի որ այդ աշխատանքների արդյունքները դեռևս չեն օգտագործվում լիցենզավորված գործունեության ընթացքում: Փաստացի

իրականացված ավարտված ներդրումների ծավալները ըստ ուղղությունների ներկայացված են աղյուսակում 5-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 6

| | | | |
|---|---|---|---|
| **1** | **2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ** | **14 394.33** | |
| **2** | **Ավարտված ներդրումներ** | **13 080.8** | |
| **2.1** | **Հանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը, այդ թվում՝** | **1141.6** | ենթակա չէ փոխհատուցման սակագնով |
| 2.1.1 | արտաքին լուսավորության աշխատանքներ | 130.55 | |
| 2.1.2 | սարքավորումների (ՕՊՆ, ԿՍՕ, ՅԱՌՎ) արժեքներից նվազեցված ներդրումներ | 639.22 | |
| 2.1.3 | արկղերի ձեռքբերման ուղղությամբ չհիմնավորված ներդրումներ | 195.7 | |
| 2.1.4 | համակարգչային փեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցումներ | 2.42 | |
| 2.1.5 | ներդրումային ծրագրով չնախատեսված և չհիմնավորված ներդրումներ | 132.45 | |
| 2.1.6 | Բագրատունյաց 54 հասցեում իրականացված ներդրումներ | 17.68 | |
| 2.1.7 | մինչև 25000 դրամ ծավալով ներդրումներ | 5.57 | |
| 2.1.8 | նախորդ տարվա հաշվետվություններում տեղ գտած սխալներ | 17.98 | |
| **2.2** | **Նախատեսված ներդրումների ծավալները գերազանցող չհիմնավորված ներդրումների ծավալը** | **25.0** | ենթակա չէ փոխհատուցման սակագնով |
| **2.3** | **Նոր բաժանորդների միացման ուղղությամբ կատարված միացման վճարներ** | **257.1** | ենթակա է նվազեցման ներդրումների ծավալից |
| **3** | **2008թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ծավալը** | **11 657.1** | ենթակա է փոխհատուցման սակագնով |